

ՔԱԺԱՆՈՐՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հասարակական
 Տարեկան 10 ժր.
 վեցամսեայ 5 »
 Արտատպարանի հասարակական
 տարեկան 12 »
 վեցամսեայ 6 »
 ԿԱՆՆԻՅ ՎՃԻՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեն տրուիր
 —)(—
 Ծանուցման տոյր 20 ասն-
 րիւ Է. երեքին աւելի ասն-
 ցանկերու համար 20 Օլօ
 գեղջ կրնայ :

ՇԱԽՈՒՄ

Նախկին եւ նորալ կրկն
 Խմբագրութեան հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՍԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՈՒՍԱՆԱՀԱՅԵՐԸ

—)(—

Պրայիլան ուրախութիւն լուր
 մը կը հասնի մեզ : Վերջապէս այն
 տեղի մերայիրները ըմբռնած կը
 թուին թէ ընթերցողները ինչ
 փրկարար դեր մը կը կատարեն
 մարդու մը ազգային եւ անհա-
 տական կեանքին մէջ, և այս
 համոզումով, այս պահուս կաշ-
 խատին՝ Ռուսմանիոյ հայերուն
 անգրանիկ ընթերցարանին հի-
 մերը գնելու :
 Ի հարկէ յոյժ գովելի են
 տեղւոյն քահանան, ինչպէս
 նաև բոլոր այն ազգայինները,
 որոնք, ինչպէս կը հաստատէ
 մեր թղթակիցը, ջանքեր կը
 անեն այս օգտակար գաղափարը
 իրագործելու : Փափաքելի էր որ
 կալցի, Պուքրէշի և ուրիշ տե-
 ղերու քահանաներն ալ այս ուղ-
 ղութեամբ իրենց վրայ խօսել
 սային : Ամէն պարագայի մէջ,
 մենք անպատճառ հոգեւորակա-
 նին գործակցութեան պէտք չէ
 որ սպասենք, մտնելու համար
 այն ուղին որ կը տանի դէպի
 ազգայնութեան զգացումները :
 Ռուսմանիոյ ամէն կողմերը
 սփռուած հայերուն խորհուրդ-
 կուտանք որ ամէն բան իրենք
 իրենցմէ սպասեն, մէկ կողմ
 թողլով ամէն բան եկեղեցական-
 ներէ սպասելու սխուր ունակու-
 թիւնը : Այս կերպով պիտի կըր-
 նայ որ մը վերնալ այն անջրպե-
 սը որ այս պահուս գոյութիւն
 ունի Դանուբի երկու եզրերնե-
 բուն վրայ սփռուած հայերուն
 կեանքին մէջ :
 Ի՞նչ անջրպետ . . .
 Ասորին հին գաղթականու-
 թիւնը նորոգուած լեզուով և
 զգացումներով. անգին փտու-
 թեան յարատեւութիւն մը, ան-
 դարձում մխրճում մը դէպի հա-
 կազային ճանապարհը : Ասորին
 տանականներով զայրոցներ որոնք
 ճշմարտապէս հայ սերունդ մը
 հասցնելու ջանքեր կընեն. ան-
 դին՝ գայրոցներու անբաւակա-
 նութիւն եթէ ոչ բացարձակ չգո-
 յութիւն. ասորին՝ մամուլ, վէճ,
 պայքար, կեանք. անդին՝ գե-

րեզմանի լուծիւն մը, զոր բա-
 րեբախտաբար այժմ կուգան խզել
 Պրայիլի մեր ազգայինները ի-
 բրեց հաստատելի ընթերցարա-
 նով :
 Այս ահագին տարբերութիւնը
 ի հարկէ պէտք է զլխաւորաբար
 փնտնել սա պարագային մէջ որ
 մինչդեռ պուլխարահայութիւնը
 նորանորգաղթականութիւններով
 միշտ նորոգուած ու թարմացած
 է, Ռուսմանիա ընդհակառակը,
 բազմաաւարտ նուազ նորեկներ
 ընդունելով, իր նախնական վի-
 ճակին մէջ մնացած է : Եւ սա-
 կայն նորերու թիւը դարձեալ
 բաւականաչափ է կարելորդ գեր
 մը կատարելու համար Ռուսմանիոյ
 հայոց վերակենդանութեան գոր-
 ծին մէջ : Կը լսենք որ արդէն
 Պուքրէշի հայ նոր գաղթակա-
 նութիւնը, զլխաւորապէս ոտոտս-
 թոցիներէ շաղկացած, այս մըտ-
 քով ձեռնարկներ ըրած է. բայց
 այս ազգօգուտ մտադրութիւնը
 ջլատուեր, լմնցեր է տելույն
 թաղական խորհուրդին յարու-
 ցած խոչնդոտներուն առջեւ : Թէ
 ինչո՞ւ այդ պարունները կը հա-
 կառակին ամէն անգամ որ ըն-
 թերցարան մը, ընկերութիւն մը
 հաստատուի կուզուի հոն, մին-
 չեւ այսօր անբացարկելի գաղտ-
 նիք մնացած է մեզ համար Մին-
 չեւ հիմա թուրք կառավարու-
 թիւնն էր որ կը քանգէր մեր
 ազգային հաստատութիւնները,
 որ անթափանց պարիսպներ կը
 կառուցուէր հայապատ ամէն
 նոր ձեռնարկի դէմ : Հիմա, և թէ
 մեր առած տեղեկութիւնները
 ճիշդ են, մեր ազգային մարմին-
 ներն են որ այս սխուր գերը
 ստանձնած են. անոնք՝ որ կո-
 չում ունին գրօշակիրներն ըլլա-
 լու ազգային յառաջդիմութեան :
 Կը մնայ տեսնել թէ մեր ազ-
 գակիցները ձեռնթափ պիտի
 մնան, անյաղթելի համարելով
 այդ ստուարածիւթ շիրուած ար-
 գելքները, թէ անյողդող պիտի
 մնան իրենց ազգօտու նպատակ-
 ներուն իրագործման մտադրու-
 թեան վրայ, և մեզի՝ անգին
 երջանկութիւնը պիտի նուիրեն,
 որը օրին արձանագրելու ամէն

նոր քայլ դէպի վերակենդանու-
 թիւն :
 ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ
 ԿՆՈՉ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
 Այսօր ամէն մարդ գիտէ թէ
 մարդկային ազգի գոյութեան
 երկու տարրերն մէկն է կինը և
 թէ այդ տարրի աղնուցումը
 ահագին ազդեցութիւն ունի
 մարդու ընկերային յառաջդի-
 մութեան և քաղաքակրթութեան
 վրայ :
 Հին ատենները, երբ տակա-
 ւին մարդկութիւնը շատ բան
 կորսնցուցած չէր իր նախնական
 վիճակէն, այդ մարդը իր գե-
 րին գարձուցած էր այն էակը,
 զոր Աստուած օգնական տուաւ
 անոր : Նոյն իսկ հոշակաւոր փի-
 լիսոփաներ եղան, որոնք կնոջ
 մէջ ուրիշ բան չէին տեսնել,
 բայց եթէ տկար արարած մը,
 որուն գերն ու գիրք սահմանա-
 փակուած էր տնական պէտքերը
 հոգալու և իր զաւակները սնու-
 ցանելու մէջ միայն : Այնպէս կը
 հատարային ու կը քարոզէին, թէ
 կինը իր մարմնական ու հոգե-
 կազմով ու բնաւորութիւնով կա-
 տարեալ երախայ մըն էր և հարկ
 էր զայն ենթարկել այդ մարդու՝
 այսինքն «բուն մարդու» հզօր
 կամքին :
 Սակայն աւելի վերջերը երբ
 սկիզբնական աստապետութեան
 նողկալի բռնակալութիւնը այլ
 եւս անհանդուրժելի դարձաւ,
 երբ ծնունդ տուին հաւասարու-
 թիւն և քաղաքացիական իրա-
 ւունք բառերը, ինքնին ասպա-
 րէզ իջաւ նսե կնոջական հար-
 ցը, անոր դաստիարակութեան
 կարեւորութիւնը :
 Դեռ ասկէ դար մը առաջ ա-
 զատարիւն ֆրանսացիներու մղած
 այն անմահ կռիւր որ իրա-
 ւունքի և հաստատութեան ա-
 մենէն ազգու՝ ամենէն սուր յայ-
 տարարն և զաւ՝ իրեն հետ ա-
 ռաջ մղեց նաև կինն որու ազատու-
 թեան ամենէն փափուկ՝ ամենէն
 զեղեցիկ խնդիրը :
 Եւ տակաւ գիւրամտաշելի՝
 տակաւ հաճոյալի դարձաւ այդ

նուրը նիւթի վրայ խօսիլ ու
 գործել :
 Ահա թէ ի՞նչ կըսէ այդ մա-
 սին պերճախօս տաղանդ մը՝ ժիւլ
 Ֆաւր. «Աշխարհի մէջ կնոջ գե-
 րին վրայ խօսելը մեր ամենէն
 քաղցր՝ ամենէն զօրաւոր յու-
 զումները պատմել է : Մեր արտի
 արձագանգները հաւաքել և մեր
 ընտանեկան կեանքի է՛ն անուշ,
 է՛ն ուժով և նոյն իսկ է՛ն աղ-
 մկայոյց զգացումները լուսաւո-
 րել է : Համեմատել այդ գերը
 կառավարութեան հետ՝ քաղաք-
 տել հանրային կեանքը՝ ընտա-
 նեկան կեանքի հետ, ցոյց տալ
 այն նուրը՝ խորհրդաւոր բայց
 անկասկածելի հանդոյցը, որով
 այդ երկուքը կապուած են իրա-
 բու հետ, այնպիսի ինդիւր մը
 շոշափել է, որուն քննութիւնը կը
 կարօտի ստուար գրուածի մը .
 դրուած մը՝ որ ինքնին շատ
 հրապուրիչ պիտի ըլլայ մեզ հա-
 մար : Անոր իւրաքանչիւր էլին
 մէջ պիտի վերստին գտնենք մեր
 սրաէն թռած հառաջանքի կտոր
 մը, մեր աչքէն թաւալած ար-
 ցունքի կաթիլ մը և մեր ապա-
 գային վերեւ փալկոյ յուսոյ այն
 նշոյլը, որ մեզ կառաջնորդէ՝
 մեր այն տաղնապալից վայր-
 կեանքներուն, որոնցմէ ո՛չ ոք
 զժբախտաբար զերծ է այս աշ-
 խարհի վրայ . . . »
 Այդպէս ուրեմն՝ մարդիկ որ-
 քան հեռացան իրենց նախնա-
 կան—կամ աւելի որոշ բառերով
 բիրտ ու վայրենի—վիճակէն,
 նոյնքան մօտեցան կնոջ ազատու-
 թեան՝ անոր գիրքն ու գերը ու-
 րոշելու վտեմ գաղափարին :
 Ֆրանսական քաղաքակրթու-
 թիւնն ու քաղաքակրթութիւնը
 իրենց սկիզբն առին այրերու և
 կիներու մէջ հաստատուած սերտ
 յարաբերութենէն : Կնոջ փափուկ
 և զգայուն սիրտը մշակուեցաւ
 և մարդկութիւնը մղեց միշտ
 դէպի բարին՝ միշտ դէպի գե-
 ղեցիկը : Այն կինը որ մարդ-
 կութեան մայր եղած էր՝ կըր-
 թուեցաւ և քաղաքակրթութեան
 խանձարուրը եղաւ : Առողջ կի-
 նը առողջ մարդ արտադրեց և
 բարեկրթ կինը ընկերութեան

մէջ ներքուծիւն ու բարքերու մէջ ազնուութիւն սփռեց :

Եւ այսօր կը տեսնենք թէ մարդկութիւնը աւելի կատարելագործուած է աշխարհի այն մասերուն մէջ, ուր այլ մարդը համոզուած է որ կինը՝ անոր հաճոյից մէկ տարրը նկատուելէ աւելի բարձր կոչում մը ունի : Իսկ ընկերութիւնը շլատուած և մարդկութիւնը անբարոյականացած է հոն՝ ուր կինը այլ մարդու սովորական մէկ ստացուածքը դարձած և յարգուելէ աւելի արհամարհուած է :

Յրանսա և Անդրիա Իրենց «ստրոնդներով, Գերմանիա և Ամերիկա Իրենց համալսարաններով, իսկ Թուրքիա և Պարսկաստան Իրենց կանանցներով շօշափելի փաստեր են :

Երեւելի մարդ մը բնած է, «պալատ մը ուր կին չկայ, կը նմանի տարիի մը որ գարուն չունի՝ կամ գարնան մը, որ վարդ չունի» :

Եւ մենք կաւելցնենք. կին մը, որ դաստիարակուած չէ, կը նմանի վարդի մը որ հոտ չունի . . .

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պոլիս, 10 Դեկտ.

Պոլիս մէկ շաբաթէ ի վեր կը վաշխէր Ռուսիոյ Զարին հօրեղբորորդի Մեծ-Իսկանդր Նիգոյանի գոյալիքի աշխույժութիւնը : Այս աշխույժութիւնը, փնջալէս յայտնի է, Պոլսէն մէկ քանի ժամ հեռու կալաթարիա ըսուած տեղը վերջին Ռուս-թուրք պատերազմին մեծնող ոտս զինուորներու յիշատակին համար կառուցուած եկեղեցւոյ բացումը էր : Ռուսք պատերազմի ա-

տեն մինչեւ այդ տեղը եկած էին : Բայց որովհետեւ թրքաց հասարակաց կարծիքը կը գրգռուէր այս բանէն, գործին այն հանգամանքը արուեստաբար, Իրբեւ թէ Զարին բարեւեցեր և մեծարանքը մատուցանելու եկած էր Մեծ-Իսկանդր :

Իրաւ է որ պաշտօնական ընդունելութիւնք պատշաճ կերպով, և նախապէս պալատին ու Ռուսիոյ դեսպանատան մէջ կարգադրուած եղանակաւ տեղի ունեցան, բայց թուրքերը շատ պակաս կերպով ընդունեցին այս աշխույժութիւնը, և լրագիրները չոր ու ցամաք կարծանագրին Մեծ-Իսկանդրին աշխույժութիւնները և այլն : Օրինակի համար, բնած էր չի գրուեցաւ այն փաստաւոր հանդէսին համար որ տեղի ունեցաւ անցեալ կիրակի, կալաթարիա, եկեղեցւոյ օձման առթիւ, նմանապէս Մեծ-Իսկանդրին Զարին աշխույժութեան և յունաց ու շայնց Պատրիարքներու աշխույժութեան առթիւ. օտար թերթերը կը գրին, իսկ թուրք թերթերը ո՛չ. պատճառն այն է որ կրէտէի ստացած վերջին վիճակին պատասխանատու ոտսերը կը ծանցցուին. ամենքը կըսեն թէ՛ Երկրիս իշխան Իրբեւ Զարին ազատարար այս կերպով վարձատրուեցաւ : Զի կարծուի որ քաղաքական բան մը կարգադրուած ըլլայ այս միջոցին, առսերը Պոլսոյ մէջ ոտքի կուտան մը սեղծեցին և նուիրագործեցին. ա՛յ Իրենց ինչ փոյթ, հետզհետէ կը սկսին աակէց ետքը ուխտաւորական կարաւանները, որոնք գիտենք թէ ուրիշ պիտի սկսին բայց չենք գիտեր թէ ուր պիտի վերջանան . . .

* * * Կրէտէի գործերու վրայ դեռ բան մը չի գրուեցաւ այստեղ, թէ պէտ հեռագիրք կը ծանուցանեն թէ Երկրիս իշխանը արդէն հասած է Կրէտէ և վարչութեան ղեկը ձեռք առած :

* * * Երկու օրէ ի վեր հասարակաց կարծիքը կը զբաղեցնէ զԿար մը որ Իրբեւ մէջ գործուեցաւ նախընթաց իրիկուն : Սպաննուողն է կայսերա-

կան թիկնապահ Ղանի պէյ անուն ալպանացի մը, որ իր ընկերներէն մէկուն հետ Բերա, սրճարանի մը մէջ նստած առեն, ընկերովը կողմանէ զլինէն ընկերովը զարնուեր է : Ինչպէս կը տեսնէք զէպը պարզ բան մըն է, բայց կարծէ որ քանի մը բառով բացատրուի թէ ինչո՞ւ այսքան կարեւորութիւն առած է գործը : Այս անձը Պոլսոյ մէջ չի ծանցցող չի կար. բառին բովանդակ նշանակութեամբը բնապետ մըն էր. շատերէ ճնշմամբ և սպաննալիքով գրամներ կորցած, բարձրաստիճան անձնաւորութիւններ ձեռնած և նախատած, հեղինակները անյայտ մացած ոճերները ինք գործած, և այլն, և այլն : Կը յիշուի որ մէկ երկու տարի առաջ, Տօքթ. Էմէթեանէ ալ ճնշմամբ 100 ոսկի պահանջած էր. որուն վրայ Տօքթօրը միջոց մը Պոլսէն հեռացաւ և ուր ուրեմն միջնորդութիւններով վերադարձաւ Պոլիս : Մէկ խօսքով, այս անձին դիմագրաւող ուժ չի կար Պոլսոյ մէջ և ամենքը կը զողային իրմէ : Կը պատմեն թէ ինքը Պէշիքթաշ, հայտ մը կարուածը նստիւ է հինգ տարի առանց դրամ մը ստալու և վերջին անգամ տունէն փոխադրուելուն առթիւ, ամբողջ զուսները, պատուհանները, մարմարիները միասին տարեր է : Այս տունէն կայս. պալատ հինգ քայլ է : Վերջապէս բարերար գնդակը ամէն բան լուծեց : Մարդասպան է քաղաքապետական ժողովոյ անդամ Հաֆէզ փաշա :

* * * Երկէ մտաւ Ալի Շահպազ էֆէնտի, որ ամուսնական խնդրոյ մը առթիւ, Յարութիւն Պատրիարքի օրով բանադրուած և ապա իսլամութիւնը ընդունող Շահպազ կարապետ էֆէնտին է : Մեծ ազդանդի և արժանիքի տէր էր նախազեցալը, զոր աղըը կարանցուց, բացարձակապէս նուիրանի յիմարութեան շնորհիւ : Ժամանակին Ազգ. Ժողովոյ մէջ աթոռ ունեցած էր : Բայց Շահպազի յիշատակը բոլորովին շանդատուելու համար, պէտք է ըսել թէ, մինչև վեր-

ջին յունչը հայ ազգին անպատասխան մը չէ գործած և իրաւունք ունի մեր խել մը էֆէնտիներէն. և մասնաւորապէս նուիրանէն աւելի յարգուելու : Երբ կարկուտ Երուսաղէմի ազգապետական գետնները խելու ելած էր, Շահպազն էր որ հայոց իրաւունքները պաշտպանեց : Շահպազ, որովհետեւ բախտախնդիր մը չէր, թրքաւալէ յետոյ, յառաջդիմութեան ճամբուն մէջ քայլ չառարնաւ, որովհետեւ իր բոլորուշողութիւնը կին առնելու վրայ կենդանացուցած էր :

* * * Մեր ազգային գործերը ինչ վիճակի մէջ են հարցնէք թերեւ, բնաւ մի մտածէք. և կա, գնացի լուրեր և չոր տեղեկութիւններ : Ա՛յ, Պատրիարքը այսինչին աշխույժութեան զնաց, յունաց պատրիարքը երեկ մը պատրիարքին աշխույժութեան և այլն : Ասոնց ամենուն ալ սակը բան մը չը կայ. բայց Օրմանեան Պատրիարքը այնչափ վարպետ դերակատար մըն է որ, Իրաւաւոր երբեմն ամենին իրաւեկներն ալ կը խաբէ : Ն. Սրբազնութիւնը գիտէ թէ ինչ միջոցներ պէտք են յաջողուելու և ընդ երկար աթոռին վրայ միալու համար. և գործերը անոր համեմատ լարած է. ու քարոզներուն ալ ճիշդ այդ ուղղութիւնը տուած է : Բայց սա ալ ճիշդ է որ իրմէն խաբուողները հետզհետէ կը պակսին. և անոնք որ իրեն կը մօտենան կը հասկնան թէ վասիկանեան դիւանագիտութեան մէջ մեծ արժէք ունեցող անձնաւորութեան մը հետ է գործերնին :

Մէկ երկու օր առաջ ցոյց տուին ինձ վանէն հեռագրեր, որոնք մասնաւորներու ուղղեալ են : Այդ հեռագրաց մէջ կը յայտնուի թէ ինչ մը գիւղերու ազգայինները ալ Կիւմիւրի կուլթեան սկսած են գիտել : Վանայ կողմը հռովմէական եկեղեցին հաստատուն հիմ կը դնէ և աակէց ո՛չ մէկ միջոց կը գործադրուի դեռ : Ըստ Օրմանեան Պատրիարքի հայ ազգը ներկայիս մէջ, Արմաշու վանք մը և խել մը Կոտնակ, Արտնակ, Բարկէն,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (6)

ՀԱՅՏԻ ԳԻՆ

ԳԱՂՔԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

ԺԲ.

Առջի օրէն Մարկոս աղայի աչքին զարկած էր Աստղիկի գեղեցկութիւնը, որ իր արիւնտոտ յիշատակներուն և պրոցուներ օրերուն մէջ ալ աւելի ներբացած, ալ աւելի գտնուած, աղամանդի մը պէս կը շողողար քաղթականութեան, խառնակոյտին մէջ : Առջի օրէն Մարկոս աղայ հակում մը գրաց գէպի առ չքնաղ էակը, բայց իր գիրքին բարձրութիւնը, խնամակալ օրիորդին ներկայութիւնը և մանաւանդ իր բարի մարդու համբաւը վտանգելու վախը զգուշաւոր կընէին զինքը :

Մարկոս աղայ՝ վաղանցուկ գրգիռ մը, վայրկենական քմայք մը կարծեց իր մէջ բորբոքիլ սկսող կրակը, և փորձեց մարել իր զբաղումներուն, և տարբեր հաճոյքներու մէջ, բայց չի յաջողեցաւ : Աստղիկի հմայիչ պատկերը, ցերեկը իր գործերը կը խառնակէր և զիչերը իր քունը կը վրդովէր, և անոր տիրանալու կիրքը օրէ օր աւելի ուժովցած և աւելի բոցավառ. այրող լաւայի մը պէս իր

երակներուն մէջ կեռօք :

Երբ օրիորդին մեկնելովը իր ձեռքը մնաց պաղթականներու վերին հակուցութիւնը, ինք բոլորովին անձնատուր իր վայրագ կրքին, սկսաւ ուղղակի իր նպատակին վազել : Ալ ամէն իր սկսաւ աշխույժ գաղթականներուն. երկար կանգ կատնէր Աստղիկի մօտ, կը նստէր քովը, կը խօսէր հետը. կը զրուէր կը համբուրէր զաւակները, և ինքզինքը շատ զգածուած ցուցնելով անոր վիճակէն. կը յայտնէր, թէ պատրաստ է անոր և զաւակներուն ապագայի հոգը իր վրայ առնելու :

Աստղիկ իր գաւառացիի միտմտութիւնովը, անկարող Մարկոս աղայի ներքին նպատակին թափանցելու, կը հատար անոր բոլոր խօսքերուն, և հալած իր զի պէս կը կլլէր զանոնք : Նոյն իսկ ինքզինքը բազմաւոր կը սեպէր, և հազար փառք կուտար Աստուծոյ, որ իր օտարութեան և անախտութեան օրերուն մէջ, այդպիսի բարի մարդ մը հանած էր զէմը :

Մարկոս աղայ շուտով հասկցաւ որ Աստղիկ բնաւ չէր նմանէր քաղքենի ան կարգ մը մեղկ էակներու, որոնք ժպիտի մը առջև կը թուլնան, և շողողուն նուէրով մը կը շլանան. բայց ինք յուսահատող մարդ չէր, և սկսաւ աւելի վարպետօրէն իր ցանցերը փռել, թակարար ձգելու համար ատ վայրի վարդը :

Մարկոս աղայի յաճախակի աշխույժութիւններէն, Աստղիկի շուրջը գէպերը քիչ քիչ կամպոսէին և կը կազմաձուլէին, նպատակները հեռազհետէ քիչնալով, գաղթականները ալ զատ հաշտ կերպով չէին կրնար ապրիլ իրարու հետ, և մանաւանդ չէին կրնար տանիլ որ Մարկոս աղան զայ և ժամերով նստի ու խօսի Աստղիկի հետ : Իրենց զբոզոնութիւնը բարձրածայն չէին կրնար յայտնել, քանի որ անչափ ազգեցիկ էր ան, և բարձր անոր անունը, բայց իրարու հետ յաճախ կը փոխաշային :

— Հա՛, տեսէ՛ք նորէն եկաւ ազան, հիմա գլուխ գլխի տուած սանաքներով կը փոփսան :

— Այնարհաքիս մէջ հեկ կեկն ըլլալու է, հեկ ալ աղուոր, որ երեսդ նոյնին :

— Աստղիկ մենք անօթի կը ստակինք, իսկ ան փօսաչին բան մը պակաս չէ :

— Երեսին ալ նայիս նէ սուրբ կըլմանին :

Ու աս բամբասանքի աղտոտ պըղպղակները հետզհետէ աւելի մեծնալով, տարածուելով, Աստղիկի սպրած միջավայրը կը թունաւորէին :

Աստղիկ բան մը չէր հասկնար անցած զարձակէն, և զարմանքով կը տեսնէր, որ իր գրացիները ստալուան պէս չէին տեսնուէր իրեն հետ. ամենուն լիզու ին ծայրը էր հեղուն :

Թիւն մը, և երեսուն վրայ կիւծաւոր ժպիտ մը կը տեսնէր միշտ :

Մարկոս աղայ ամէն բան կը հասկնար, և կարծես զանոնք աւելի արծարծելու զիտուժով աւելի կը բազմապատկեր իր աշխույժութիւնները :

Աստղիկ օր մը ալ անտաննիլ վիճակի մը հասած, զանգատի պէս բան մը բրու Մարկոս աղայի : Մարկոս աղայ, որ ճիշդ ատ վայրկեանին կըրպատէր, իրաւունք տուաւ Աստղիկի զանգատներուն, և յայտնեց թէ իր զուակներուն և թէ իրեն համար աւելի լաւ պիտի ըլլար անանձին սենեակի մը մէջ տեղաւորուելը, և աւելի ցուց որ ինք պատրաստ էր բոլոր ծախքը հոգալու :

Աստղիկ սիրով ընդունեց այս առաջարկը և երկու օր ետք փոխադրուեցաւ փաստաւոր կահաւորուած սենեակ մը :

Աստղիկ երկար չի վայելեց սակայն իր այս հանգստութիւնը. Մարկոս աղայ շուտով իր գոյնը գուրս տուաւ, նոյն իսկ փոխադրութեան յաջող գիշերը, ալ համբերութիւնը հատած, փորձեց իր երկար առտենէ ի վեր փոփոխած և սնուցած գաղափարը իրականացնել :

Աստղիկ շանթահար եղաւ Մարկոս աղայի կերպարանափոխութեան շուտով սակայն իր ինքնութիւնը գտաւ, և սենեակէն դուրս ըրաւ զանի.

ՎԱՀՆՆ ՄԱՆՈՒԷԼԻՆԻ
(Շարունակելի)

Խարկէն անոնք զարդարեաներ ունի եւ ասկէց աւելին ի չարէն է :

Հոգ չէ թէ ծանր ճնշումներ գործադրուին գաւառներու մէջ, սուրբերը զանձներու համար. հոգ չէ թէ հոս, հոն գործուին սպանութիւններ որոնք միաւորներով կը սկսին, ու գումարը հարիւրաւորներու կը յանդի. հոգ չէ եթէ բանտներու մէջ այսօր քան հայեր կը հեծնն տակուին. հոգ չէ եթէ հիւրերը թեմ մը ամբողջութեամբ ձեռքէ կելլայ, եւս, եւ այլն : կը բաւէ որ պատարագներ կը մտաւորուին եւ խորհրդատի խօսքերով ու լուրերով ժողովուրդին աչքին վրայ կը փչուի : Անձ մը որ պաշտօնական շրջանակներու մէջ ալ անուն ունի, երեկ կըսէր թէ, էրման սկսած են շարականք ու ժամագիրքը սրբազրի մկառիֆէն՝ աւերելով Հայաստանեաց ազգի եւ եկեղեցւոյ բառերը : Թագաւորի անունները, զորոթեան մողթանքները եւ այլն : Ասոնց դէմ ինչ կընէ, կամ ինչ պիտի ընէ Պատրիարքը, չեմ գիտեր. բայց սոս Գրիգոր . . . «Յառաջիկայ կիրակի, Գաւորմ փաշայի եկեղեցիին առջին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, նոյն եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցանէ», ինչպէս կը գրէին երեկուան ազգային թերթերը :

նՅՏ

Գրայիցա, 12 Դեկտ.

Գրած էի արդէն թէ հոս գրագարան մը կամ ընթերցարան մը հաստատելու առաջին փորձը վերնապատ էր : Ուրախ եմ ծանուցանելու թէ այդ կարեւոր խնդիրը պարտաւոր ձեռք առնուած է, այս անգամ աւելի հաստատուն հիմնքով վրայ : Տեղւոյ Տ. Ստեփան քահանան ևւս ձեռքէն եկածը չի խնայեր այս նպատակը իրագործելու համար : Սրճարանատէր պապատաղցի Պ. Խաչիկ խոստացած է սենեակ մը և երկու թերթ նուիրել ապագայ ընթերցարանին : Ուրիշ աղքատիկ աղջայիներ ևս համակրած են ընթերցարանի գաղափարին, որուն իրադրումը մը այնքան օգտակար պիտի ըլլայ տեղւոյ ամբողջ հայ զաւթականութեան :

նՅՊՐ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Ստաւուի արիւնքտ աշխարհը իր կրած արհաւիրքներով, Հայաստանի ընդհանուր կոտորածներէն առաջ՝ աշխարհի ուշագրգիռութիւնն էր վրայ հրաւիրեց. նոյն իսկ Սրբապետի գիւնազարտութեան մէջն ալ պահ մը մեծ իրաւում առաջ բերաւ : Սրտաճմբկի ու աղէկտուր տեսարաններ պարզուեցան հոնք թրոնը Պիթիւի նահանգապետ Հասան Թափիին փաշայի ու թրքական շորթորդ զօրաբանակի հրամանատար Լէզկի 2էքի փաշայի թեւազրութեամբ և օսմ. Լանտաւոր զօրքերու վայրագութեամբ տեղի ունեցան հայրենիքի այդ սրբապատ խորշին մէջ :

Խնդիր մը, որուն պէտքը այնքան զգալի է, մեր ազգային կեանքի մէջ աեղի ունեցող այս-

պիսի պատմական ու յեղափոխական շրջանի մը մէջ, ձրնոր միշտ սխալ ենթադրութիւնները անգէտ առարկութիւնները առաջ կը բերէ, մեր բնագաւառը, մեր հայրենիքը՝ իր հանգամանքներով պէտք եղածին պէս իմաստասիրած չըլլալն է :

Սասուն՝ որ հայոց վերջին հարբատութեան անկումէն ետք միակ ապաստանարանն էր դարձած մեր արի լեռնականներու ազատ կեանքին, գրեթէ այդ երկիրն ալ, այսօր մեղմէ շատերուն անձանթ է : Ասիկայ իրօք ցաւալի է : Եթէ օտար մը հարցընէ մեզ թէ «որն Հայաստան, ձեր հայրենիքը» այն աշխարհը՝ որուն համար դուք յեղափոխութիւն կը կազմէք ու հեռուէն կը մտածէք, անկա Հայաստան չէ, քանի որ անոր բնակչութեան մեծամասնութիւնը օտարը կը կազմէ : Անոնք պիտի ուրանան որ, այն անձանք աշխարհը՝ որի ամէնմէկ քարն ու սարը հայու անմեղ արիւնի թարմ հեռքերը կը կրեն ու կենդանի վիճակներ են մեր արդար իրաւունքին, այդ աշխարհի մէջ ամէն մէկ լեռան վրայ քեռ ևս տեղանուած չէն ու անչէն վանքերն ու Հայկական ուխտատեղիները՝ տեղակ հայ անհամար գիւղերով թէ միջ ազգային կեանքի մօտիկ անցեալի մէջ ունեցած ճոխութեան անժխտիկ վիճակներ են : Եւ սակայն՝ գիւնազարտութեան համար այդ պիսի ապացոյցները այնքան կարեւորութիւն չունին, անոնք աեղի գրական ու համոզիչ փաստեր կը պահանջեն մեզմէ մեր Հայրենիքը՝ իսկապէս մեր լինելը ապացուցանելու : Այս մասին մենք ձեռնհասութիւն չունինք՝ այդ ամէն պահանջները զոհացընելու, բայց իրողութիւն այս է որ, այսքան աշխատութիւններէ ու զոհողութիւններէ ետք, մեր Հայրենիքը ըստ արժանոյն չէ ուսումնասիրուած մեր կողմէն :

նԱՀԱ-ՊԵՏ

Ս Ո Պ Ր Ա Ն Ի Է

Պուկարական ազգ. ժողովը իր նիստերը կը շարունակէ :

Արեւելեան երկաթուղիներու ինդրին վիճաբանութիւնը անցեալ Բշ. և Գշ. օրերուն նիստերը ամբողջապէս գրաւեց : Երեքշաբթի օրուան նիստը մինչեւ գիշերուան ժամը տասն ու կէս տեւեց : 30ի չափ ատենաբաններ գրուած էին, բայց միայն 15ը ժամանակ գտան խօսելու : Ելելու մտից նախարար Պ. Թէոտորով երկու անգամ խօսեցաւ. առաջին անգամ 4 և երկրորդ անգամ մը 2 ժամ շարունակ : Վերջապէս, հաւանակ ընդդիմադիրներու ընդդիմութեան, մեծամասնութիւնը քուէարկեց Արեւելեան երկա-

թուղեաց շահագործման գնումը վաւերացնող պայմանագիրը, ինչպէս նաեւ հարիւրին 5 տոկոսով 290 միլիոն ֆրանքի վոխառութեան ծրագրին պայմանագրութիւնը : Նիստը աւարտելու մօտ, փոքրամասնութեան պատկանող երեւութանները քիչ մնաց որ ձեռնարկին իրենց կառավարական հակառակորդներուն հետ, բայց միայն պոռալ կանչելով ու իրարու սպառնալով բաւականացան :

Յառաջիկայ 1899 ասրոյ ելելու ապացոյցը կազմուած է : Պուկարիա 84 միլիոն ֆր. մուսք և գրեթէ նոյնքան ծախս մը պիտի ունենայ : Այս ծախսին գրեթէ 23 միլիոնը բանակին յատկացուած է : Պետութեան ընդհանուր պարտքը 179 միլիոն ֆրանքի կը հասնի. ինչ որ, ըստ Պ. Թէոտորովի, մեծ նշանակութիւն մը չունի 4 միլիոն բնակիչ ունեցող երկրի մը համար :

Ք Ր Ո Ն Ի Կ

Իզտամ, «Ռոտոսթայի Ռոշելուտ» վերնագրին տակ, կը ծանուցանէ Ռոտոստոյի աղջայիներէն Հաճի Գրիգոր Ակորովիչի մահը : Հանգուցեալը մեծ հարստութիւն մը կը թողու իր զաւակներուն : Իր գրամարկը որ տեղական իշխանութեանց ներկայութեանը բացուեր է, կը պարունակէր 30,000 օսմ. ոսկի հնչուն գրամ, ինչպէս նաև Քըրէտի Լէոնէի վրայ 50,000 ոսկինոց չէք մը : Ուրիշ արժեթղթերու հետ միասին, հարստութեան համագումարը 200,000 ոսկի կը յանգի : Ժառանգորդներու մէջ վէճ ծագելով Պուսէն վաստաբան մը կանչեր են :

Յայտնի չէ թէ այս մեծահարուստ անձը ինչ բաժին հանած է ազգին այսքան հաղարաւոր ոսկիներէ :

Յաւելով կիմանանք թէ ազգային վաղեմի ուսուցիչներէն Տ. Յարութիւն Թիւրան (թուարան Բասթալ) նախորդ շաբթու մեռեր է Պոլսոյ մէջ : Խղճամիւս ուսուցիչ մըն էր, որ բազմաթիւ աշակերտներ հասուցած է և ընտիր յիշատակ մը կը թողու :

Տիգրանակերտի մէջ գերմանական նոր որբանոց մը հիմնուեր է, ուր այժմ 50է աւելի հայ որբեր կը պատուարուին :

Խարբերդէ կը գրեն «Լէվընտ Հէրըլտ»ի :

Ինչպէս որ կը գուշակուէր, ցորենի և գարիի անբաւական հունձքերը, այս տարի կարեւոր բարձրացում մը առաջ բերին արմտեաց գներուն վրայ : Աեւրորդ է ըսել թէ այս սղութիւնը ամենէն աւելի աղքատները կը հարուածէ : Ասոնց կացութիւնը շատ խղճալի է : Եթէ աւելցնեմ նաև կենդանիներուն մէջ ճարակած պաճարախտը, պիտի ըմբռնէք թէ որքան յո սահատա-

կան է գեղացւոյն վիճակը :

— Կաթողիկոսը ամսոյս 8ին Թիֆլիս հասնելով, ընդունուեր է առաջնորդին և ներսխանան դրարոցին հոգաբարձուներուն կողմէն :

— Ս. Սթեֆանօի ռուսական յիշատակարանին բացման հանդէսին առթիւ, Սօֆիաի և գաւառներու մէջ բնակող Պուկարիոյ ազատութեան համար կուռղ պիտորները շնորհատրական հեռագրերը դրկեր են զօրավար կուս. Իկնաթիէֆի, որ Ս. Սթեֆանօի դաշնագրին առաջին հեղինակը և ստորագրողն եղած և Պուկարիոյ ազգագրական և պատմական ստեմանները գծած է :

— Կիրասունի մօտ, Ագ-Քէսէրի կոչուած գիւղը գրեթէ ամբողջապէս հրոյ ճարակ եղած է :

— Նուրեանի դարձեալ իշխանութեան գլուխը անցնելու ըստ միջոցառումները Ղուրը ինկած են : Բերաի թաղ. խորհրդոյ անգամ ընտրուել է ետքը, տեսնելով թէ իր ապագայ պաշտօնակիցները մէկիկ մէկիկ կը հրաժարին, ինք ալ իր հրաժարականը դրկեր է վարչութեան, որ, փութացեր է զայն ընդունիլ : Ասիկա շուղալից երկրորդ պատակն է զոր կը գրուի նուրեան :

— Այս գիշեր, Անկէլ Սլավովի սրահին մէջ տեղի պիտի ունենայ ընտանեկան մեծ պարահանդէս մը ի նպաստ քաղաքի ազգային վարժարանաց : Կարգադիր մասնախումբը ամէն խընամք տուրած է երեկոյթը չըքեց և հրապուրիչ զարձնելու համար :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Ե Է Մ Է Ն

Գահիրէէն «Տէյլի Մէյլ» լրագրին կը գրեն թէ ապստամբութիւնը օրէ օր սպառնալից գոյն մը կառնէ այնտեղ : Երեսուն հազար թուրք զօրքեր կը պատրաստուին յարձակելու ապստամբներու վրայ, սրունք իրենց կարգին շատ լաւ պիտուած են : Սանաի մէջ փորձեր են միւթթիւն սպաննել աղօթք ըրած վայրկեանին : Թուրքերը սկսեր են տուրքերը իջեցնել, զժգոհութիւններու առաջը առնելու համար, կըսուի նաեւ թէ երկիրը մշտական պիտուորական գրաւման ներքեւ պիտի առնուի և ռազմագիտական բոլոր կէտերուն վրայ ամբողջ պիտի կառուցուին :

Սա անեկալի է թէ Եէմէնի խնդիրը վերջին ծայր կը զբաղեցնէ թուրք կառավարութիւնը : Նոյնմբեր 20ին Երլտըզի մէջ Սուլթանին նախագահութեան ներքեւ տեղի ունեցեր է մարեշալնի բողով մը որ տեւեր է ամբողջ վեց ժամեր : Թուրքերը խիստ միջոցներ առնել կը վախ-

նան, որովհետեւ այն ստեղծւած ընդհանուր ուժ մը կը ձեւա-
ցընեն: Յայտնի է թէ Եկեղեցի
կրէտէի նման թուրքիական բաժ-
նուելու կը ձգտի: Թուրք կառա-
վարութիւնը կը կասկածի թէ այս
բոլոր պատմութիւններուն մէջ
խառնուած կայ Անգլիան, որ
կարմիր ծովու և Պարսից ծոցի
ափերուն վրայ գործակալներու
ամբողջ լէգէոն մը կը պահէ:

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Կ. Պոլսէ Գուրիէ տէ Պալքանի
կը գրեն թէ՛ թուրքերուն մէջ
տիրող ցասումը և սրտնեղութիւ-
նը մեծ է: Աստիք ամենքն ալ
զինուած կը շրջին փողոցներուն
մէջ: Անանուն նամակներ զըր-
կուած են բարձրագոյն տեղեր և
կիմացեն որ եթէ մինչեւ յա-
ռաջիկայ մարտ ամսոյ մէջ այս
գրութիւնը շարունակէ և արդի
նախարարները չի փոխուին,
զարհուրելի ծայրայեղութիւննե-
րու պէտք է սպասել: Ելալըզլի
պալատին մէջ նախագոյնու-
թիւնները տասնապատկուած են.
արդէն հոն դանուած թնդա-
նօթներուն վրայ յաւելումներ
եղած են ու գիշերները զաղանի
կերպով կաշխատուի նոր ամրոց-
ներ կառուցանելու գործին...

Եւ յետոյ մտահոգութեան շար-
ժառիթները մէկէ մեկը են.
Եկեղեցին զատ Մակեթոնիոյ և
ասիական դաւաճներու կացու-
թիւնը հեռի է հանդարտ ըլլա-
լէ: Ուստի բարենորոգումի ծրա-
գրեր սկսած են յիշատակուիլ:
Միայն թէ արդի պարագանե-
րուն մէջ, ամենքը համոզուած
են թէ անոնց գործադրութիւնը
գրեթէ անհնարին է: Երկու
տարբեր կան որ կարգիւն ամէն
բարենորոգում. այսինքն վար-
չութիւնը և կազմակերպելի եր-
կիրներուն մէջ ապրող զանազան
ազգութիւնները: Վարչութիւնը
ընտրուած է ազգեցիկ անձերու
պաշտպաններէն, իսկ պար-
կեշտ անձերը մէկուսացուած են:
Պէտք է վարեն վեր ամէն բան
կերպարանափոխել, այսինքն
«հաստարիմներ»ը հեռացնել
և ասոնց տեղ բերել այնպիսի
անձեր որոնց կրաւորականու-
թիւնը տարակուսելի է:

Գալով միւս արգելքին, Մա-
կեթոնիոյ և Անատոլի մէջ բա-
րենորոգումներ մտցնել կը նշա-
նակէ քրիստոնեային և իսլամին
հաւասար իրաւունքներ տալ, որ
ըսել է զժողովները քիւրտերը
և ալպանիացիները որոնք մին-
չեւ այսօր այնքան փայփայուած
են: Արդ այդ զժողովութիւնը
կընայ ապստամբութիւն մը ա-
ռաջ բերել որուն զիմադրելու
անկարող կզգայ ինքզինքը կա-
ռավարութիւնը: Պարկեշտ և
լըշախոհ թուրքերը լաւ ըմբռ-
նած են կացութիւնը. սաստիկ

ցաւ կիմանան. բայց ձեռքերնուն
բան չի գար:

Խ Ա Ռ Ի Ն Լ Ո Ւ Ի Բ Ե Բ

Ռուսական թերթ մը կը գրէ թէ
յունարէնի և թուրքերէնի տեղ-
եակ ուս սպաներ հրաւէր ստա-
ցեր են կրէտէի վարչութեան
մէջ պաշտօն սնանձնելու:

— Չորս պետութեանց ծովա-
կալները կրէտէէ մեկնեցան:
Մեկնելէ առաջ ինչոյք մը տե-
ղի ունեցաւ, որուն միջոցին ծո-
վակալ Բոթիէ բաժակաճառով մը
յաջողութիւն մաղթեց Երկիրն
իշխանին:

— «Էքօ տը Բարի» լրագիրը
վերապահութեամբ կը գրէ թէ
Տրէյֆիւս արդէն նաև հեծած է
Բարիզ վերադառնալու:

— Թուրք կառավարութիւնը,
կրէտէէն Սելանիկ և Իզմիր գաղ-
թող թուրքերուն խստիւ արդի-
ւեր է Պոլիս մտնել:

— Գերմանիոյ մէջ այս պահուս
ուշագրութեան առնուած է այն
խիստ լեզուն զոր կը գործածէ
ուսական մամուլը Գերմանիոյ
նկատմամբ, Վիլհելմ կայսեր
ճամբորդութենէն ի վեր:

— Թուրք կառավարութիւնը
Գրուրի գործարանին պատուէր է
տուեր հազար հատ արագածիգ
թնթանօթ պատրաստելու:

— Տէլլի թէլէկրաֆ լրագրին
Բէթերպուրկի թղթակիցը կը
ժանուցանէ թէ Ավզանիսանի
մէջ իսլամական ընդարձակ ա-
պստամբութիւն մը կը պատրաս-
տուի, թէ ուսական և թէ անդ-
լիական սահմանազուխներուն
վրայ: Ռուս և անգլիական կառա-
վարութիւնները համաձայներ են
միասին գործել, այս ապստամ-
բութեան ծաւալման առաջքը
առնելու համար:

— Հակահիշխանական դեսպա-
նախորհուրդին անգլիացի պատ-
ուիրակները կնքուած բրոթօքօ-
լը չեն ստորագրած:

— Կ. Պոլսէն կը ծանուցանեն
թէ ուսական յիշատակարանին
բացման օրը, պուլկարական
գործակատար Պ. Մարքով, պեր-
ճախօս ատենաբանութիւն մը ը-
նելով, երախտագիտութիւն յայտ-
բեր է Ռուսիոյ, այնքան զոհո-
ղութիւններով Պուլկարիան ա-
յատած ըլլալուն համար:

— Պուլկարիոյ իշխանապետու-
թիւնը սակէց առաջ կանոն դրած
էր որ բոլոր կառավարական պաշ-
տօնատարները երկրին մէջ շին-
ուած հագուստներ ու կոշիկներ
միայն կրեն: Անցեալ երկուշաբ-
թի օր, իշխանապետութեան հը-
րամանաւ բոլոր կառավարական
պաշտօնատանց մէջ քննութիւն
կատարուեցաւ հասկնալու համար
թէ պաշտօնատարք համակեր-
պած են սյդ կանոնին:

— Բէքինէ հեռագիր մը կը ծա-
նուցանէ թէ Չինու կայսրը հո-
գեւարք է:

— Մօնթէնէլքօի մէջ առաւ

ձիւն տեղացած ըլլալով ամբողջ
ճամբայները գոցուած էին: Վա-
ժէվիցալիէն Բօթիօրիցա գացող
խումբ մը շօրքեր անցրի մը մէջ
բանաարկուած մնալով, երկու օր
անհնարին եղեր է անոնց օգնու-
թեան երթալ:

— Չարը և Չարուհին Լիվա-
տիանէն Բեթերպուրկ վերադար-
ձեր են:

— Թէեւ Ֆաշտաի խնդիրը կար-
գադրուած և սակայն Անգլիոյ
պատերազմական գործոց նախա-
րարին գործունէութիւնը չէ դադ-
րած: 50,000 ուումբ 7 միլիոն
փամփուշտ ապսպրուած է:

Մեր այսօրուան թուով կը
վերսկսինք շարունակութիւնն
«Հայրենիքի Յիշատակներուն»,
որոնց առաջին մասը՝ Նահա-Պե-
տի նկարուն գրչին տակ՝ այնքան
վառ դոյներով և զգայուն շեշ-
տերով ի վեր հանեց Հայաստա-
նի հողին, ջուրին ու կապուտակ
երկիրներն անսպառ հրապոյրնե-
րը:

Վ Ե Ր Զ Ի Ն Զ Ե Կ Ո Յ Յ

Պուլկարիոյ և արտասահմանի մեր
արգոյ բաժանորդներէն կը խնդ-
րենք որ անյապաղ իրենց բաժ-
նեգիտները մեզ հասցնեն: Հա-
կառակ պարագային ծագելիք
անպատեհութեանց պատասխա-
նատու չէ խմբագրութիւնս:

«ԻՐԱՒՈՒՆՔ» Գ. ՏԱՐԵՇՐԶԱՆԸ
(1399)

«Իրաւունք» յառաջիկայ յուն-
վարէն սկսեալ պիտի հրատա-
րակուի հայերէն և պուլկարե, էն
լեզուներով և աւելի մեծ ծաւա-
լով, այնպէս որ միայն հայերէն
մասը գրեթէ թերթիս շորս ե-
րեսներուն հաւասար պարունա-
կութիւն պիտի ունենայ:

Բաժնեգին տարեկան 10 ֆր. ք.
Պուլկարիոյ և 12 ֆր. ք. արտա-
սահմանի համար:

Խմբագրութիւնս այս նոր կար-
գադրութեանց համար ստիպուած
է երկու շաբաթ դադար ընելու:
Խնք. «Իրաւունք»

Գ Ր Ա Շ Ա Ր Ն Ե Բ

Երկու վարժ և փորձառու զը-
րաշարներ, որոնք այս պահուս
Ռուսմանիա կը գտնուին, կը փա-
փագին ու է հայ տպարանի մէջ
պաշտօն ստանելու: Բանսկցու-
թեանց համար գիմել «Շար-
ժում» ի խմբագրութեան:

Լ Ո Յ Ս Ե Ս Ա Ի

Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի
հայերէն—ուսմաներէն տարե-
ցոյցը, պատկերապարզ և ճոխ
պարունակութեամբ, Գինն է
թղթակազմին 1 ֆր. լաթա-
կազմին 1.50 և փառակազմին
2 ֆր.:

Գիմել հեղինակին, կալաց:

—)(—

Պ Օ Ր Ս Ա

Վառճա 19 Դեկտեմբեր

Պ Ո Ւ Ղ Տ Ս Յ

Վազօն, լիպրա 55—58, հէքթօլ.
9.20—10 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ.
9—12 ֆրանք

Ա Ր Բ Ս

Լիպրա 42—50 հէքթօլ. 6.40—6.80
ֆրանք

Մ Ի Ս Ի Բ

Վազօն, 55—57 լիպրա, 6.20—6.50
Առապա, 55—60 լիպրա, 6.40—6.80
Կիւնկէ 15—20 վազօն, 25—30 առապա
կէլմէքտէ տիր:

Տ Ա Ր Ը

Կիւնկէ 1,2 արապա կէլմէքտէ տիր.
58—60 լիպրա, 5.80—6 ֆրանք

Ֆ Ա Ս Ո Ւ Լ Ե Ս

Կիւնկէ 1,2 առապա կէլմէքտէ տիր
100 օգգասը 18—22 ֆր. մալա կէտրէ:
Առապա մուամէլէսի նարոյէն 21
ֆրանք հիսապը իլէ տիր:

Կիւնկէ 8—10 վազօն, 50—60
արապա պուղտայ, 10—15 արապա
արա կէլմէքտէ տիր:

Վ Ա Ր Վ Օ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Բ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵԱՒԻՒԼ)

(Գ Ի Ն 1 Յ ր անգ)

Մնացած սակաւաթիւ օրինակներ
կը ծախուին Վառճաի մէջ Շարժուի
խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտոն
Կոշի մօտ, Ռուսլոք հայկ Մալա-
եանի սրճարանը:



Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ն

Եթէ կուզէք հագնել կոշիկներ
որոնք իրենց վրայ միացունեն ձեզ
և զիմացկունութեան կատարելու-
թիւն եւ մանաւանդ գինի չափաւո-
րութիւն, առանց վարանելու գինե-
ցէք Ստեփան Խորասանճեանի, Մու-
սալա, բաղնիք փողոց, հաճի Հասան
էֆէնտի օթէլին տակ, հաւատարմ
որ առիթէն պիտի օգտուիք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզու
այցեատմա, հասցեատմա, նամա-
կազմուի, հարսանեկան հրատ-
րագիր, մահազգ, ինչպէս նաև
պրօշիւներ:

Գիներն յոյժ գիւրամատչելի
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգրտ-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Печатница „Взаимность“, Варна